2088

ՄԵԼՔ. ԵՍԱՅԵՆՑ

ԵՐԱՉ

(Պատկեր Բաղեշատեաց կեանքից)

№ 16.

Հրատարակութիւն
ԹԻՖԼԻՍԻ ՀԻՍԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Գինն է 3 կոպ.

ԹԻՖԼԻՍ 1905 Թ.
ՍՊՐԻՍՈՒ Ընկ. Մատար. փ. № 15.
(80)

891.99
Ե-58

«ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ»

Ընդունում է տպագրութեան յարմար գրուածքներ—վիպական, ժողովրդականացրած գիտական, առողջապահական, պատմական, գիւղատնտեսական, մանկական և այլն. գրուածքները լինելու են 1—2 տպագրական թերթի ծաւալով։

Հեղինակների և թարգմանիչների վարձատրութեան չափը որոշում է «Ընկերութիւնը»։

Հարկաւոր են գիրք տարածող գործակալներ՝ բաւական ձեռնտու պայմաններով։ Գործակալների անունները կը յայտարարուեն թէ գրքերի վրայ և թէ թերթերում։

Ընկերութեան հասցէն.

Въ г. Тифлисъ.

Въ Тифлисское Издательское Т-во.
Г. Бабурянцу. п. я. за № 187.

89.39
Ե-58
2089

ՄԵԼՔ. ԵՄՐՅԵԱՆ

ԵՐԱՉ

(Պատկեր Բալախանու կեանքից)

1001/798
1001/798

№ 16.

Հրատարակութիւն
ԹԻՖԼԻԶԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

ԹԻՖԼԻՍ 1905 Թ.
Տպար. „ՀԵՐՄԷՍ“ ԸՆԿ. Մագաք. փ. № 15.
(80)

08.04.2013

28637

Дозволено цензурою, 31 Декабря 1904 года. г. Тифлисъ.

19 NOV 2011

ԵՐԱԶ

Այդ երազ էր ցնորամիտ...
Ս. Շահ-Ազիզ։

ԵՐԱԶ

Ա

Սեպտեմբերի վերջերին էր, որ Ազիզենց Ֆարսին Բալախանուց վերադարձաւ գիւղը։ Վերադարձաւ, շատերի նախանձը շարժեց և շատերի էլ ախորժակը բացաւ... Նրա կարմիր շալէ արխալուղը, արծաթէ գօտին, մահուդ չուխէն՝ թեւերի տակը կանաչ կտոր դցած, երկարավիզ կօշիկները, կլոր գլխարկը և վերջապէս վիճակախաղում ընկած չուգունէ ժամացոյցը ում նախանձը չէր շարժիլ Զանգէզուրում, այն էլ այդպիսի մի յետ ընկած գիւղում... Իսկ եթէ դրա վրա աւելացնենք բերնէ-բերան անցնող, բերած խալաթների և ճոթ ու կտորների պատմութիւնը՝—ապա պատկերը կատարեալ կլինի։ Ճիշտ է, շատերն են օտարութիւնից «տրաքելիս

սանդուղներ» բերել, շատերն են արծաթէ ժա
մացոյցով ու քամարով գիւղը վերադարձ
ու անմեղ պատանիների ախորժակը գրգռել
բայց Ազիզենց Ֆարսին մի ուրիշ բան է
նրանից «գլուխ դարիբաւոր» հազիւ թէ գիւ
ղումը պատահած լինէր. և հէնց դա էր պատ
ճառը, որ ողջ գիւղը մի բերան դարձած
նրա մասին էր խօսում, նրա գովքը անում
Շատերը, նոյն իսկ, իրանց տունն էին հրա
ւիրում և պատմել տալիս դէսից-դէնից։ Ֆար
սին Բալախանին շատ վառ գոյներով էր նկա
րագրում։ Շատերը երանի էին տալիս նրա
մօրը, որ այդպիսի «աշխատաւոր» տղայ ու
նի։

—Տունդ չքանդուի, տղատէր. տղայ է է
աշխարհս հաւաքել ու իրանց տունն է թա
փել. ասում էին բարեկամները և հեռա
նում։

Բայց ով էր Ազիզենց Ֆարսին։ Մի հա
սարակ «մասլէօնշչիկ», որ մի քանի տարի
շարունակ Բալախանու հոտած կազարմանե
րում (բանւորանոց) օր ու գիշեր անելով,
բանւորութիւնից հասել էր մասլէօնշչիկու
թեան (իւղ քսող) «բարձր աստիճանին», մի

պաշտօն, որին այսօր հազարաւոր ֆարսիներ
իդէալ շինած, հասնել են ձգտում։ Տարինե
րի չարքաշ աշխատութեամբ ձեռք բերած
կոպէկները, տուն գնալու ժամանակ՝ կեր
պով ծախսելով, նա մազի չափ անգամ չէր
շեղուել այն շաւղից, որ տարիներից գծել էին
զանազան ֆարսիներ... Ուրիշներին զարմաց
նելու համար արդեօք, թէ հէնց իրանց չար
քաշ կեանքից յետոյ մի «լաւ ապրելու» հա
մար, այդ ողորմելի արարածները, շատ ան
գամ, արիւնով ձեռք բերած ռանէթները կո
պէկների տեղ են ծախսում։ Հաւանական է,
որ հէնց ուրիշներին զարմացնելու և շլաց
նելու համար. մանաւանդ, որ շատերը վե
րադառնալով օտարութիւնից, անմիջապէս
ամուսնանում են, կամ առնւազը նշան են
դնում... Այդ շատերից մէկն էլ Ազիզենց
Ֆարսին էր, որ գիւղում այնքան աղմուկ էր
հանել...

Ֆարսու մօր «երջանկութիւնը» հան
գիստ չէր տալիս գիւղացի մայրերին, ամեն
ոք երանի էր տալիս այն օրին, որ կըտես
նեն իրանց որդուն էլ «այն օրին» հասած։
Ահա այդպիսի մայրերից մէկն էլ Շիրինենց

Սոնան էր, որ իր որդի Սաքօին Բալախանի ճանապարհ դնելիս՝ եկել էր մինչև գիւղի աղբրի մօտ և անդադար Ֆարսուն էր օրինակ բերում՝ խօսելիս։

—Որդիս, ասում էր նա.—ինչ ուզում ես արա, միայն որ գիւղը վերադառնաս, անուններս գետնովը չտաս. մենք էլ մեզ համեմատ տուն ենք. «դոստ ու դուշման»-ի նայիր, «նամուս-ղէյրաթ» արա։ Օրէնքը այն է, որ տղան օտարութեան մէջ ինչ էլ որ անէ, հարցնող չի լինելու. միայն թէ վերջը լաւ լինի, որ պարզերես՝ ծնողաց երես դուրս գայ... Մի օր սոված ճալով՝ մարդ չի մեռնիլ. որ հետ դառնաս տուն, քեզ չեն հարցնելու թէ ինչ ես կերել. ասելու են՝ ինչ ես բերել. գրպանդ են պառելու։ Գրպանումդ որ եղաւ, խօսքը քոնն է... Մի խօսքով, այնպէս արա, որ Շիրինենց Աղաջանին գիւղամիջում պարզերես անես...

Այս խօսքերով Սաքօին ճանապարհ դրին Նաւթի քաղաքը։

Բ

Տան և վեց տարեկան Սաքօն իր համագիւղացիների հետ հասաւ Բալախանի, որոնց միջոցով և «վեդեօրշչիկի» պաշտօն ստացաւ. ուրիշ ոչ մի պաշտօն այնքան հեշտ չէր ճարւում... Է՛հ, ինչ անենք, մենակ ինքը չէ, իրան նման հազարներ կան. ինչպէս նրանք, այնպէս էլ ինքը։ Բայց կազարմանքը... Այդ արդէն շատ ծանր էր Սաքօի համար։ Հարիւրաւոր թուրք ու հայ, կեղտոտ բանւորների հետ պառկել մի մութ ու խոնաւ նկուղի մէջ, առաջին անգամից սարսափեցրեց նրան։ Հէնց ուզում էր առաջին պատահողի հետ գիւղը փախչի, բայց մէկ էլ որ յիշում էր Ազիզենց Ֆարսուն, յետ էր կենում այդ մտքից. մտածում էր. «խոմ յաւիտենական չէ, որ մարդ չկարողանայ դի-

մանալ. ժամանակաւոր բան է. մարդու մի ոտից կախ տալու էլ որ լինին, էլի մի տարի մի տեղ կարող է ճնալ։ Չէ՞ որ վերջը լաւ կ՚լինի...

Վերջը լաւ կ՚լինի... Ուրիշ խօսքով, մի օր՝ իր վերադարձին գիւղում մի քանի մարդկանց պիտի զարմացնէ իր գեղեցիկ շորերով...

Վեդրաչու պաշտօնին շուտ չընտելացաւ։ Մանաւանդ գիշերւայ ծառայութիւնը անտանելի էր. ամեն ինչ կ՚տար, միայն թէ գիշերները հերթ պահել չ՚տային. բայց ո՞ւմ կարող էր յայտնել իր միտքը, և ո՞վ կընդունէր «այդպիսի տարօրինակ» խնդիր։ Ի՞նչ ասել է լինել «տարտալշչիկ» և կամ վեդեօրշչիկ... Գիշեր-ցերեկ, չորս հինգ ժամ շարունակ տեղը մեխուած, անթարթ աչքերով և լարուած ուշադրութեամբ նայել նաւթահան թոկին, նոյն իսկ տարիներով ծառայածների համար մի շատ դժուար աշխատութիւն է. ուր ճնաց Սաքօի պէս պարապ-սարապ պտտած, անհոգ այծառածի համար, որ սովոր էր օրական հարիւր անգամ ծառերի կատարները բարձրանալ, սար ու ձոր չափ-

չփել իր քէֆին։ Ա՜խր Սաքօն ո՞վ, վեդեօրշչիկութիւնը ո՞վ... Զմեռւայ երկար ու ցուրտ գիշերներին նաւթահորերում հերթ պահելը հեշտ բան է՝ Սաքօի նման՝ մօր պահած երեխաների համար։ Նա մօր պահած է. ինչ անենք, որ ուրիշների ցաւով վարակուած, այժմ ընկել է Բալախանու նաւթի ցեխերի մէջ։ Տանը եղած ժամանակը, որ երեկոյեան հանդից վերադառնում էր, «սարֆ» չէր անում, որ իր տրեխները հանէ ոտներից. քոյրերն էին գալիս իրանց ազիզ եղբօր տրեխները քաշում, ոտները լւանում և փափուկ անկողնի մէջ դնում։ Իսկ այժմ...

Գ.

Զմեռայ գիշեր էր։ Ցուրտն ու խաւարը պատել էր ամենուրէք. հանդարտ կերպով տեղում էր ձիւնը և երկիրը ծածկում փափուկ սաւանով։ Ամէն ինչ ընկղմուած էր խորին լռութեան մէջ. Միայն երբեմն երբեմն լսւում էին փորիչ-մեքենաների (հոր փորելու) խոլ ճռնչիւնը։ Գիշերային այդ պահուն մեքենաներն էին միայն, որ տաք-տաք գոլորշիներ արտադրելով, անընդհատ գործունէութեան մէջ էին, որոնց մերթ արագ և մերթ ընդհատ ձայները միախառնուելով գիշերային սուլիչների ձայների հետ, մի խորհրդաւորութիւն էին տալիս այդ համատարած լռութեանը։

Սաքօն և իր ընկերը նաւթահան ճախարակի մօտ կանգնած՝ կամաց-կամաց նաւթ էին հանում. ըստ երևոյթին շատ հոգնած էին, որովհետև չորս ժամ շարունակ աշխատում էին արդէն։ Սառած ոտները տախտակներից էին կպել, բայց այնուամենայնիւ քունները տանում էր. որքան աշխատում էին արթուն մնալ, երգում էին մելամաղձիկ բայաթիներ, սակայն 'ի զուր. արդէն թուլացել էին։ Մի քաղցր նինջ սկսաւ տիրել նրանց։ Ննջում էր Սաքօն և երազ տեսնում։

Հարիւրաւոր խառն 'ի խառն տեսարաններ գալիս անցնում էին աչքի առաջից։ Նրան թւում էր, որ ինքը արդէն այլ ևս վերդեօրշիկ չէ, այլ մի ուրիշ, աւելի բարձր պաշտօնեայ. փող է աշխատել, հարստացել և գնում է հայրենիք։—Նոր շորեր է հագել, ճիշտ Ազիզենց Ֆարսու նման։ Կարմիր շալէ արխալուղ, մահուդ չուխա, արծաթէ քամար, երկարավիզ կօշիկներ...

Արդէն տանն է։ Հայրը, մայրը, քոյրերն ու բարեկամները հաւաքել են և շրջապատել իրան ժպտադէմ. շուրջը անբաւ ուրախութիւն է տիրում. ամենքն էլ խալաթ պիտի ստանան։ Հանում է մօր «մերինոս» արխալուխացուն, հօր «լաստիկ» արխալուղացուն, քոյրերի կանաչ չարդաթները, բարեկամների ու ազգականների խալաթները և

բաժանում։ Ամե՛նքն էլ ուրախ են, ամենքը էլ շնորհակալ... Աչքալուսանքի եկածները թէյ են խմում և ուրախ-ուրախ խօսում. դրանց մէջ է նոյն իսկ Ազիզենց Ֆարսին, որ եկել էր՝ Բալախանուց տեղեկութիւն հարցնելու։ Ֆարսուն տեսնելուն պէս նա ժպտադէմ հարցնում է.

—Ա՛յ Ֆարս, քէֆդ, հալդ, ի՞նչպէս ես։

—Քէֆս խարաբ է, գիւղում օրը լաւ չի անցնում։ Ուրիշ բան էր Բալախանումը...

Թը՛խկ. Սաքօն սարսափած բացաւ աչքերը։ «Ժալօնկան» (նաւթահան ցիլինդը) բարձրացել էր նորից ու ամբողջ բուրգը դղրդեցնելով, ուժով կպել էր վերևին։ Ժալօնկայի դղրդոցից էլ վրա հասաւ քացխած գործակատարը—մի պինդ ապտակ նախ Սաքօին և ապա ընկերոջը։

Է՛, ապտակը ոչինչ, բայց որ մի մանէթի շարաֆ (տուգանք) էին գրելու...

«Գիւղում օրը լաւ չի անցնում. ուրիշ բան է Բալախանումը». հնչում էր դեռ Սաքօի՝ ապտակից խժժացող ականջին։

Շուտով լոյս կը տեսնեն

ՄԵԼՔ. ԵՍԱՅԵԱՆԻ

1. Օրէնքը . . . . գ. 3 կոպ.
2. Մի Ռուբլի . . . . գ. 3 կոպ.

(Պատկերներ Բալախանու կեանքից)

Պատրաստ է տպագր. հաժար.

А. Агаронянъ

«Фалагъ Вургуни»

(Сраженная судьбой)

Перев. Н. Кара-Мурза.

Цѣна 5 коп.

ՊԱՀԵՍՏՈՒՄ ՈՒՆԻՆՔ

1) Սիսաեմ. (Մ. Հալբէի) և Երջանիկ իշխանը. (Օ. Վիլդէի). գ. 15 կ.
2) Երկու նովելլա. (Ի. Ամօ'ի) . գ. 10 կ.
Թարգմ. գերմ. Լ. Բաբայեան.
3) Բանաստեղծութիւններ. Ադա Նեգրի'ի. II պրակ. Թ. Յակ. Յակոբեանի . . . գ. 30 կ.
4) Մայրը (Վ. Հիւգօի) և ուրիշ զր. գ. 7 կ.

Գումարով գնողներին 25—35% զեղչ.

Դիմել՝ Գ. Բաբուրեանին

Тифлисъ

Г. Бабурянцу.

(П. Я. за № 187)

ՏՊԱԳՐՒԵԼՈՒ ԵՆ

Վ. Փափազեանի՝ Ստամոքսի համար 5 կ.
» Մարդագայլը . 10 կ.
» Երկու թռչուն . 3 կ.
Մելք. Եսայեանի՝ Օրէնքը } Պատկերներ Բաղխանու կեանքից.
» » Մի բուրլի... }
Մ. Գորկիյի՝ Եմելիան Պիլեայ. թ. Մուշէ վ.
Մ. Նորդաուի՝ Տօնի գիշերը. թ. Լ. Բաբայեանի. և այլն։

Շուտով ձեռնարկելու է նաև ռուսերէն մի շարք գրուածքների տպագրութիւնը։

Գրքերի գլխաւոր պահեստը գտնուում է Թիֆլիսում, Ընկերութեան գործավար Գ. Բաբուրեանի մօտ. (Դարցօվայա փողոց, Առևտր[illegible] Ն. Բոզարջեանի)։

Պահեստատեղից գիրք պահանջողին 30% զեղչ. եթէ պատուէրը 25 ր. հասնի՝ ճանապարհածախսը ընկերութան հաշուին է։ Վճարը պիտի լինի կանխիկ. կարելի է նաև վերադիր վճարով. և միսիայով՝ ոչ ոքի։

ՀՀ Ազգային գրադարան
NL0323894

28637

ԹԻՖԼ. ՀՐԱՏ. ԸՆԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐ, պատմ. զրույց Լէօի. 2-րդ տպ. (սպառուած) . 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՂՋԻԿ, վէպիկ Մաքսիմ Գորկիյի. թարգ. Մուշէ վարդապետի . . . 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ զրոյցներ, Վ. Փափազեանի (սպառուած) . . 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՄԸ. պատմուածք Ա. Անտոնենկոյի, 2-րդ տպագր. . . 5 կ.
5. ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿ. Նովէլլա, Էլ. Օ-ժէշկօի թարգմ. Ս. Շանվերդեանի . 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ, վէպիկ Շիրվանզադէի . 15 կ.
7. ԵՂՕՐ ՔՈՌ ԲԱԽՏԸ, պատմուածք Շանրիաբի (սպառուած) . . 3 կ.
8. ԵԱՊՕՆԻԱ, (համառօտ տեսութիւն) Խ. Խաչատրեանի . . 3 կ.
9. ԴԱՆԿՕԻ ՍԻՐՏԸ, Մաքսիմ Գորկիյի, թարգ. Ա. Աթայեանի . . 3 կ.
10. ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ, Մաքսիմ Գորկիյի թարգ. Ա. Աթայեանի . . 10 կ.
11. ՄԵԾ ՔԱԿԱՆՔ և ԱՌԻԻԾԻ ՄԱՀԸ Վ. Փափազեանի . . . 3 կ.
12. ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ և ԱՆԿԵՂԾ ԸՆԾԱՅ, Վ. Փափազեանի . . 4 կ.
13. ԽԵԼՕՔ ԱՔԱՂԱՂՆԵՐ ԵՒ ԴՐԱԽՏԸ, Վ. Փափազեանի . . . 5 կ.
14. ՍԻՐՈՅ ՀՈԳԻՏԸ, Ա. Աթայեանի . . 3 կ.
15. ՎԻՇԱՊ և ուրիշ զրոյցներ, Վ. Փափազեանի . . . . 5 կ.
16 ԵՐԱՋ—Մելք. Եսայեանի . . .3 կ.

Доз. Ценз. 16 Декабря 1904 г. Тифлисъ. Тип. «Гермесъ»